«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ օրենք) 4-րդ հոդվածի՝

2. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«**ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմ՝** ավտովարորդ, կամ ավտովարորդի օգնական, կամ ինքնազբաղված ավտովարորդ, ով իրականացնում է ուղևորների կամ բեռների փոխադրում.

ավտովարորդ՝ ավտոտրանսպորտային միջոցը վարող անձ.

վարելու ժամանակահատված՝ հանգստի կամ ընդմիջման ժամերից հետո մինչև հաջորդ ընդմիջման կամ հանգստի ժամը ավտովարորդի ավտոտրանսպորտային միջոցը վարելու կուտակված ժամերը։»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«7. Հայաստանի Հանրապետությունից միջպետական և Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ և թույլատրելի առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող, ներառյալ՝ կցորդի կամ կիսակցորդի բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեն տախոգրաֆով, բացառությամբ՝

1) միջպետական և ներհանրապետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների, եթե երթուղու երկարությունը չի գերազանցում 150 կիլոմետրը,

2) 40 կմ/ժ առավելագույն թույլատրելի արագությունը չգերազանցող ավտոտրանսպորտային միջոցների,

3) զինված ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության, հրշեջ ծառայությունների և հասարակական կարգի պահպանման համար պատասխանատու ուժերի կողմից կամ նրանց հսկողությամբ օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների,

4) 10-ից 17 նստատեղ (ներառյալ վարորդի նստատեղը) ունեցող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրային նպատակներով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար,

5) ոչ առևտրային նպատակներով մարդասիրական օգնության համար օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են արտակարգ իրավիճակների դեպքում կամ փրկարարական աշխատանքներ իրականացնելիս.

6) մասնագիտացված վթարային և բժշկական նպատակներով օգտագործվող մասնագիտացված ավտոտրանսպորտային միջոցների.

7) «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի կողմ չհանդիսացող պետություններում հաշվառված ավտոտրանսպորտային միջոցների,

8) ավտոտրանսպորտային միջոցների, որոնք տեխնիկական զարգացման, վերանորոգման կամ պահպանման նպատակներով ենթարկվում են ավտոճանապարհային փորձարկումների, ինչպես նաև նորաստեղծ կամ վերակառուցված ավտոտրանսպորտային միջոցների, որոնք դեռեւս չեն հանձնվել շահագործման,

9) ոչ առևտրային ապրանքների փոխադրման համար օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների կամ համակցված ավտոտրանսպորտային

միջոցների, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 7,5 տոննան,

10) պատմական նշանակություն ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են ոչ առևտրային նպատակներով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար։

11) կոյուղու, ջրհեղեղից պաշտպանության, ջրի, գազի և էլեկտրականության հետ կապված ծառայությունների, մայրուղիների պահպանման և հսկողության, աղբի հավաքման և վերացման, հեռագրային և հեռախոսային ծառայությունների, փոստային իրերի փոխադրման, ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման և ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդիչների և ընդունիչների հայտնաբերման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների:

8. Թվային տախոգրաֆով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպությունները և ավտովարորդները պետք է ունենան համապատասխանաբար կազմակերպության և ավտովարորդի թվային տախոգրաֆի քարտեր, որոնց ձևերը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
9. Ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի վարելու և հանգստի ժամանակահատվածները «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներին համապատասխան պետք է՝

1) օրական վարելու ժամանակահատվածը չգերազանցի ինը ժամը: Օրական վարելու ժամերը կարող են տևել մինչև տասը ժամ, բայց ոչ ավելի, քան շաբաթվա ընթացքում երկու անգամ,

2) միջին շաբաթական վարելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 48 ժամը: Շաբաթվա առավելագույն աշխատանքային ժամանակը կարող է երկարաձգվել մինչև 60 ժամ միայն այն դեպքում, եթե չորս ամսվա ընթացքում վարելու ժամանակահատվածը չի գերազանցվում շաբաթական միջինը 48 ժամը:

3) Երկու հաջորդական շաբաթների ընթացքում կուտակված ընդհանուր վարելու ժամերը չպետք է գերազանցեն 90 ժամը,

4) չորսուկես ժամ վարելուց հետո ավտովարորդը պետք է առնվազն քառասունհինգ րոպեանոց ընդմիջում անի, եթե նա չի սկսում հանգստի ժամանակահատվածը: Ընդմիջումները կարող են բաժանվել յուրաքանչյուրը առնվազն 15 րոպե ժամանակահատվածների,

5) յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում ավտովարորդը պետք է ունենա առնվազն 11 անընդմեջ ժամ ամենօրյա հանգիստ, որը կարող է կրճատվել մինչև առնվազն 9 անընդմեջ ժամի՝ մեկ շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան երեք անգամ:

6) նախորդ օրական կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածից հետո յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում ավտովարորդն ունի ևս մեկ օր հանգստի ժամանակ։

7) երկու հաջորդական շաբաթների ընթացքում ավտովարորդն առնվազն ունի կանոնավոր երկշաբաթյա հանգիստ կամ առնվազն 24 ժամ տևողությամբ մեկ շաբաթյա կանոնավոր հանգիստ և մեկ շաբաթյա կրճատված հանգստի ժամանակահատված։

10. Տրանսպորտի ոլորտի տեսչական լիազոր մարմնի կողմից տրանսպորտային միջոցներում ձայնագրող սարքի (թվային տախոգրաֆի քարտի) տեսչական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին, կազմակերպություններում և Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում։»։

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա առաջին օրը։

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137.8–րդ հոդվածի՝

1) վերնագրում «բեռնափոխադրումների» բառից հետո լրացնել «և ուղևորափոխադրումների» բառերը,

2) 1-ին մասում «միջպետական» բառերը հանել։

3) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«2.1. ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի կողմից ավտոտրանսպորտային միջոցը վարելու և հանգստի ժամանակահատվածների օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ վարորդի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, կազմակերպության պաշտոնատար անձի և անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով։»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա առաջին օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ օրենք) 17-րդ հոդվածի 2-րդ մասի «անցկացնելիս» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտի ոլորտում տեսչական լիազոր մարմնի հետ համատեղ ավտոտրանսպորտային միջոցներում ձայնագրող սարքի (թվային տախոգրաֆի քարտի) ճանապարհային տեսչական վերահսկողական գործառույթներ իրականացնելիս» բառերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա առաջին օրը։